



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
 ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
 12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 59-Ն**

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 01/15.1/4829-16 գրությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Նոր Երզնկա համայնքի զարգացման ծրագիրը՝ **համաձայն հավելվածի:**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ

3. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

4. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

5. ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ

6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ն. Կ...

ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հավելված

Նոր Երզնկա համայնքի ավագանու
12.12.2016թ. թիվ 59-Ն որոշման

ՀԱՄԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար *Ն. Կառավար* Ա. Հարությունյան

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ 2016թ

Բովանդակություն	1
-----------------	---

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ	2
---	----------

ԲԱԺԻՆ 1	4
----------------	----------

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
--------------------------------------	---

1.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
---------------------------------------	---

1.2 Տեղական ինքնակառավարման մարմինները	6
--	---

1.3 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ	8
--	---

1.4 Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը	10
--	----

1.5 Համայնքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպություններ	11
--	----

1.6 Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն	11
--	----

1.7 Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում	12
--	----

1.8 Հողօգտագործում	12
--------------------	----

1.9 Գյուղատնտեսություն	13
------------------------	----

1.10 Բնության և շրջակա միջավայրի պաշտպանություն	13
---	----

1.11 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն	14
---	----

1.12 Առևտուր և ծառայություններ	14
--------------------------------	----

1.13 Կրթություն	15
-----------------	----

1.14 Աշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	16
---	----

1.15 Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա, սպորտ	16
---	----

1.16 Հանգստի գոտիներ, զբոսայգիներ	16
-----------------------------------	----

1.17 Աշխատանք և սոցիալական ծառայություններ	17
--	----

1.18 Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը	17
--	----

1.19 Աղետների, դիսկերի կառավարում	18
-----------------------------------	----

2 Համայնքի հիմնահարցերի սահմանում

2.1 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	19
---	----

2.1.1 Համայնքի ուժեղ կողմերը	19
------------------------------	----

2.1.2 Համայնքի թույլ կողմերը	20
------------------------------	----

2.1.3 Համայնքի զարգացման հիմնական հնարավորությունները	20
---	----

2.1.4 Համայնքին սպառնացող հիմնական վտանգներ	21
---	----

ԲԱԺԻՆ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	21
-----------------------------	-----------

ԲԱԺԻՆ 3

Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզա համայնքային

համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում	23
---	-----------

3.1 Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում	24
---	----

3.2 Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկը	34
---------------------------------------	----

ԲԱԺԻՆ 4 ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ	47
-------------------------------------	-----------

ԲԱԺԻՆ 5 ՀԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, մոնիթորինգը և գնահատումը, վերանայումը	49
--	-----------

Եզրափակում	53
-------------------	-----------

Հիմնական հասկացությունների բառարան	54
---	-----------

Հավելվածներ	55
--------------------	-----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի 2017-2021 թթ. Զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՁԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀՁԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՁԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀՁԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Նոր Երզնկա համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը:

ՀՁԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀՁԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀՁԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ պտղաբուծության, վերամշակող կազմակերպություններ և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը:

Ներկայումս համայնքի հիմնախնդիրներն են հանդիսանում՝

❖ Համայնքն ունի մեկ նախադպրոցական հաստատություն, որի հզորությունը նախատեսված է 120 երեխաների համար, սակայն ներկա դրությամբ մսուր մանկապարտեզ են հաճախում շուրջ 60 երեխա՝ 2 խումբ, որոնց սպասարկում են 13 աշխատողներ: Մանկապարտեզը գործում է 7 ամիս, քանի որ շենքը չունի ջեռուցման համակարգ: Զեռուցման համակարգի կառուցումից հետո արդյունքում մանկապարտեզը կաշխատի ամբողջ հզորությամբ և ամբողջ տարին, ինչպես նաև կստեղծվեն նոր աշխատատեղ համայնքի երիտասարդ կադրերի համար: Մսուր-մանկապարտեզի բակը մանկական խաղերով կահավորվելու կարիք ունի, քանի որ ներկայումս դրված խաղերը 1972 թվականից օգտագործվել և շարքից դուրս են եկել:

❖ Համայնքում աշխատում էր Նոր Երզնկա-Աշտարակ-Երևան երթուղայինը, սակայն հիմա այն այլևս չի աշխատում և տրանսպորտային կապ մայրաքաղաքի, մարզկենտրոնի, հարևան

Աշտարակ և Եղվարդ քաղաքների հետ չկա: Ուսանողների սպասարկման համար անհրաժեշտ է գոնե մեկ երթուղային, որը կուղևորվի դեպի մայրաքաղաք:

❖ Ներկայումս ներհամայնքային ճանապարհները վերանորոգման խիստ կարիք ունեն, հատկապես 3-րդ և 8-րդ փողոցների շուտափույթ կառուցման անհարժեշտություն կա, քանի որ 3-րդ փողոցը համայնքի երկու բնակավայրերը իրար կապող ճանապարհն է, որտեղով ամեն օր վերին Երզնկայից երեխաները 8-րդ փողոցով հաճախում են դպրոց: Այդ աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 60.000 հազ. դրամ: Համայնքի մուտքի մոտ տեղադրված չեն ճանապարհային նշաններ, որը նույնպես շատ կարելի է: Սակայն համայնքի փողոցները ամբողջովին համարակալված են անհրաժեշտ ցուցանակներով:

❖ Համայնքում ոռոգման ջուրը մատակարարվում է Աշտարակ ԶՕԸ-ի կողմից, ոռոգման համակարգում կորուստները կազմում են շուրջ 70 %: Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ներհամայնքային համակարգը, որի մի մասը հիմնովին չի վերանորոգվել, և մոտակա տարիներին չվերանորոգելու արդյունքում համայնքը կկանգնի բարդ խնդրի առջև:

❖ Համայնքի կարևոր հիմնախնդիրներից է հանդիսանում նաև այն, որ 1991 թվականից, համայնքում սեփականաշնորհված՝ այժմ արդեն կառուցապատված նոր թաղամասը, (թվով տուն՝ 40, 152 մարդ բնակչությամբ), գազաֆիկացման, փողոցային լուսավորության և ասֆալտապատման կարիք ունի:

❖ Վերը նշված խնդիրները որպես ծրագրեր մշակելու և գնահատելու համար իրականացվել են դրանց քննարկում համայնքի տարածքում գործող պետական, համայնքային և մասնավոր կազմակերպությունների աշխատանքային խմբերի հետ և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, կազմակերպվել են հանրային քննարկումներ, ինչպես նաև համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀՋԾ-ն, որը պետք է քննարկվի և հաստատվի համայնքի ավագանու կողմից՝ նորընտիր համայնքի ղեկավարի պաշտոնավարելու օրվանից եռամսյա ժամկետում և դրվի գործողության մեջ: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և Նոր Երզնկա համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի N 51 -Ա որոշմամբ ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող « Նոր Երզնկա համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀՋԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀՋԾ-ում ներառված են Նոր Երզնկա համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ : ՀՋԾ-ն ներառում է նաև Նոր Երզնկա համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական

ծրագրերի բաղադրիչները: Այն Նոր Երզնկա համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Նոր Երզնկայի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ԽՄՎ-ը փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ԲԱԺԻՆ 1

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Նոր Երզնկա գյուղը գտնվում է ՀՀ մայրաքաղաք Երևանից 15 կմ հեռավորության վրա հյուսիս-արևելյան մասում, ծովի մակերևույթից 1100-1400 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1965 թվականին նախկին Աշտարակի, Եղվարդ և Կարբի գյուղերի բազայի վրա: Սկզբնական շրջանում անվանվել է 41-րդ սովխոզ: 1972 թվականին Նաիրիի շրջանը վերակազմավորվելու ընթացքում մտել է նորաստեղծ շրջանի կազմի մեջ: Այժմ գյուղը գտնվում է Կոտայքի մարզի վարչական կազմի մեջ, մարզկենտրոնից գտնվում է 55 կմ հեռավորության վրա: Բնակչությունը հավաքվել է ՀՀ տարբեր շրջաններից:

Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքը կազմում է 1635,79 հա, որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 1369.06 հա.-ը, բնակավայրերը զբաղեցնում են 133.81 հա., արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 14.81 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 3.16 հա., հատուկ պահպանվող տարածքները՝ 40.48 հա, ջրային հողերը՝ 74.47 հա, պետական սեփականություն հանդիսացող հողերը՝ 117.92 հա:

Նոր Երզնկա համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2065 մարդ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.11.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	2065
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	330
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վազոն, տնակ/ բնակվող	6

2.2	Կիսակառույցներում բնակվող	-
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	57

Համայնքի բնակչության 51% կազմում են տղամարդիկ և 49% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	2065	1012	1053
	մինչև 1 տարեկան	17	7	10
	1-2 տարեկան	34	17	17
	3-4 տարեկան	21	13	8
	5-6 տարեկան	23	11	12
	7-10 տարեկան	107	38	69
	11-14 տարեկան	104	63	41
	15-17 տարեկան	80	36	44
	18 և ավելի տարեկան	1679	827	852
2.	Կենսաթոշակառուներ(ներառյալ հաշմանդամներ)այդ թվում՝	232	110	122
	Տարիքային և աշխատանքային	170	87	83
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	12	8	4
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-	-	-
5.	Հաշմանդամ երեխաներ	4	2	2
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	-	-	-
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	-	-	-
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	15	-	15
9.	Հաշմանդամներ	5	-	5
10.	Զբաղվածներ	1090	600	490
11.	Գործազուրկներ	450	300	150
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	110		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	5		

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով: Վերջին տարիներին նկատվում է ծնելիության աճ:

1.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Նոր երզնկա համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի

ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 7 անդամներով: Նոր երզնկա համայնքի աշխատակազմը բաղկացած է 11 աշխատակցից:


Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը մասնակի վերանորոգված է: Այն գտնվում է Նոր երզնկա համայնքի կենտրոնում: Աշխատակազմի աշխատանքի կատարման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, որը լիովին բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Համայնքապետարանը դահլիճի կարիք ունի, հանրային մեծ քննարկումներ և այլ միջոցառումներ կազմակերպելու համար: Վերանորոգման աշխատանքների ավարտից հետո կլուծվի այդ խնդիրը, բարեկարգ ու հաճելի տեսք կունենա նաև կապի բաժանմունքի տարածքը, որը գտնվում է համայնքապետարանի շենքում:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 22 -ի թիվ 61 որոշմամբ (աղյուսակ2):

Նոր երզնկա համայնքի աշխատակազմը Աղյուսակ 2.

Հ/Հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝ ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1.	Համայնքի ղեկավար	1	1
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
2.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1
3.	Գլխավոր մասնագետ -(2.3-1)	1	1
4.	Գլխավոր մասնագետ- (2.3-2)	1	1
5.	Առաջատար մասնագետ (3.1-1)	1	1
6.	1-ին կարգի մասնագետ (3.2-1)		
7.	2-րդ կարգի մասնագետ (3.3-1)	1	1
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
8.	Հավաքարար	1	1
9.	Վարորդ	1	1
10.	պահակ	1	1
11.	Գիշերային պահակ	1	1
	Ընդամենը	11	11

**ՆՈՐ ԵՐՁՆԿԱ ՉԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**



Համայնքային ոչ առևտրային 2 կազմակերպությունների (<ՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 62 որոշմամբ (աղյուսակներ 3-4):

Աղյուսակ 3.

ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ ՀՈԱԿ
նախադպրոցական հաստատություն համայնքային ոչ առևտրային
կազմակերպություն

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքների քանակը
1.	Տնօրեն	1	1
2.	Հաշվապահ	1	1
3.	Բուժքույր	1	0.5
4.	Դաստիարակ	3	2
5.	Դաստիարակի օգնական	2	2
6.	Տնտեսվար	1	0.5
7.	հավաքարար	1	0,5
8.	Խոհարար	1	1
9.	Լվացարար	1	0.75
10.	Գիշերային պահակ	1	1
	Ընդամենը	13	10.25

Աղյուսակ 4.

«ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ
Մշակութային դաստիարակության համայնքային ոչ առևտրային
կազմակերպություն

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Հաստիքների քանակը
1.	Տնօրեն	1	1
2.	Գրադարանավար	1	1
3.	Գեղմասվար	1	0.5
4.	Հաշվապահ	1	0.5
5.	հավաքարար	2	2
6.	Գիշերային պահակ	1	1
	Ընդամենը	7	6

1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի բյուջեի եկամուտների, ծախսերի եվ հավելուրդի կամ դեֆիցիտի (պակասուրդի) հիմնավորումը

2015թ. փաստացի ցուցանիշներ՝

Համայնքի 2015թ. բյուջեն՝ հաստատված համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 8-ի N52-Ն որոշմամբ

2016թ. հաստատված ցուցանիշներ՝

Համայնքի 2016թ. բյուջեն՝ հաստատված համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 64 -Ն որոշմամբ

2017թ. կանխատեսվող ցուցանիշներ՝


Համայնքի վարչական բյուջեի եկամուտները՝ 43528.1 հազ. դրամ,

Համայնքի ծախսերը՝ 43528.1 հազ. դրամ,

Դիֆիցիտը (հավելուրդը)՝ 0,0 դրամ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1: ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ԳՈՅԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ¹

Համայնքի 2017թ. բյուջեի կանխատեսվող մուտքերը 43528.1 հազ. դրամ է:



¹ Նոր երզնկա համայնքի 2017թվականի բյուջեի նախագիծ

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հ/Հ	ԿԱՌՈՒՅՑԸ	Հասցե	Կառուցման տարեթիվը	Մակերեսը՝ քմ	Ընդհանուր իրավիճակի գնահատում	Նորոգման/վերանորոգման/փոխարինման կարիք	Այլ նշումներ
1.	Նոր Երզնկայի համայնքապետարանի վարչական շենք	Գ.Նոր Երզնկա 2փ 33շ	1980թ	650	բավարար	նորոգման կարիք ունի	
2.	Մշակույթի տուն	Գ.Նոր Երզնկա 1փ 29շ	1979թ	1526	լավ		
3.	Նախադպրոցական հիմնարկ	Գ.Նոր Երզնկա 6փ30շ	1972թ	385	բավարար	նորոգման և կարիք ունի	
4.	Առևտրի կենտրոնի շենք	Գ.Նոր Երզնկա 2փ50շ	1976	918.1	բավարար	նորոգման կարիք ունի	
5.	Գյուղխորհրդի վարչական շենք	Գ.Նոր Երզնկա 1փ27շ	1982	385	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
6.	Հուշարձան	Գ.Նոր Երզնկա փ1	1973 թ	1	գերազանց	նորոգման կարիք ունի	
7.	Զբոսայգի	Գ.Նոր Երզնկա 2փ		0.26	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
8	Պետական բնակելի ֆոնդ և պետական ոչ բնակելի տարածքներ	Գ.Նոր Երզնկա					
9	Ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ	Գ.Նոր Երզնկա	1971	50կմ	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
10	Ներհամայնքային նշանակության ջրահեռացման համակարգ	Գ.Նոր Երզնկա	1978	50կմ	վատ	հիմնանորոգման կարիք ունի	
11	Ներհամայնքային նշանակության	Գ.Նոր Երզնկա	1971	17կմ	բավարար	հիմնանորոգման կարիք ունի	

	ճանապարհներ						
12	ակումբ	Գ.Նոր Երզնկա 27փ52	1965թ	1 հատ	վատ	վերանորոգմա ն կարիք ունի	
13	Ներհամայնքային նշանակության ջերմամատակարարման համակարգ	Գ.Նոր Երզնկա	1968	20կմ	վատ	-	
14	Ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ	Գ.Նոր Երզնկա	1980	40կմ	վատ	վերանորոգմա ն կարիք ունի	
13	գերեզմանատուն	Գ.Նոր Երզնկա		2	բավարար		
14	սարքավորումներևայլգույ ք	Գ.Նոր Երզնկա			բավարար		

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, որը ներկայացված է հավելված 2-ում:

Համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել էր տնտեսական անկման հետևանքով, սակայն համայնքի միջոցների, ինչպես նաև պետական ծրագրերի միջոցներով աստիճանաբար վերականգնվում են: Սակայն կան դեռևս չլուծված խնդիրներ՝ օրինակ խմելու ջրի ներտնտեսային համակարգի մաշվածությունն այնքան մեծ է, որ կորուստները հասնում են 20-40%-ի: Կեղտաջրերի հեռացման կենտրոնական խողովակաշարը միացած չէ կուլեկտորին և կեղտաջրերը թափվում է Քասախ գետ:

1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքը ունեցել է 1 արդյունաբերական ձեռնարկություն/կարի արտադրամաս/, որտեղ աշխատում էին համայնքի շուրջ 100 մարդ, սակայն այժմ չունի ոչ մեկը: Սակայն ներկայումս համայնքի տարածքում կան Աշտարակի Ձոր ՓԲԸ, Ձորակ-ՌՈՒ ՍՊԸ, Էներգիա ՍՊԸ, Էլեն ԲԲԸ:

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր Երզնկա համայնքը վերջին 4 տարիների ընթացքում տվել է շուրջ 19 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, սա վկայում է այն մասին, որ համայնքը թեկուզև դանդաղ, բայց զարգացման ընթացքում է: Նախատեսում ենք առաջիկայում կազմել համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի գլխավոր հատակագիծ, քաղաքաշինական գոտիավորման նախագծեր, ինչպես նաև նախատես-

վում է ունենալ քաղաքաշինական քարտեզ: Համայնքում չունենք կոմունալ սպասարկման գրասենյակ: Համայնքում կատարվում է աղբահանության աշխատանքներ «Վիկտորիա» ՍՊԸ-ի միջոցով : Այդ կազմակերպության միջոցով համայնքում շաբաթական մեկ անգամ իրականացվում է աղբահանության աշխատանքներ: Նոր Երզնկա համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 18-ի N 35-Ն որոշմամբ հաստատվել է « Նոր Երզնկա համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը»:

Խմելու ջրի ներհամայնքային համակարգը կառուցվել է 40 տարի առաջ և ոչ մի անգամ չի ենթարկվել կապիտալ նորոգման: Նույն վթարային վիճակում է գտնվում նաև կեղտաջրերի հեռացման կոյուղու համակարգը, որի պատճառով հաճախակի են խցանումներ լինում համայնքում: Համայնքում վերականգնվել է փողոցային լուսավորության համակարգը, համայնքի նոր թաղամասը ամբողջությամբ լուսավորելու համար անհրաժեշտ է մոտ 4000.0 հազար դրամի ներդրում: Համայնքը ամբողջովին գրեթե գազաֆիկացվել է, գազաֆիկացված չէ նոր թաղամասը, որի համար անհրաժեշտ է 10.000 հազար դրամ: Համայնքն ունի 2 գերեզմանատուն յուրաքնայյուր ընտանիքին բաժին է ընկնում միջինը 12 քմ գերեզմանահող:

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում կա 108 հատ շենքեր և 62 բնակարաններ: շենքերը շահագործմանն են հանձնվել 1965-1990 թվականներին, 28557քմ տարածքով:

Աղյուսակ -ում ներկայացված է Նոր Երզնկա համայնքի բնակելի շենքերի և բնակելի տների թիվը 01.11.2016թվականի դրությամբ

Աղյուսակ 5.

Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակելի առանձնատների թիվը

Հ/Հ	Բազմաբնակարան շենքեր	բնակելի շենքերի
		թիվը
1.	Մեկ հարկանի	18
2.	Երկու հարկանի	90
	Ընդամենը	108

1.8 ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքը կազմում է 1635,79 հա, որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 1369.06հա.-ը, բնակավայրերը զբաղեցնում են 133.81 հա., արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 14.81հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 3.16 հա., հատուկ պահպանվող տարածքները՝ 40.48 հա, ջրային հողերը՝ 74.47 հա, պետական

սեփականություն հանդիսացող հողերը՝ 117.92 հա: Հողերի սեփականաշնորհմանը մասնակցել է ընտանիք, մեկ հողաբաժնի չափը կազմել է 0.75 հա, բնակավայրի տարածքը կազմում է 88.0 հա:

2007 թվականին համայնքում ներդրվեց հողերի խոշորացման ծրագիր, որի արդյունքում տարեց-տարի ավելանում է բազմամյա տնկարկների տարածքները:

Համայնքի հողային հաշվեկշիռը ներկայացված է հավելված 3-ում:

1.9 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր Երզնկա համայնքում գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղված են դաշտավարությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ, ընդհանրապես գյուղատնտեսության բնագավառում զբաղված է համայնքի բնակչության 70 %-ը: Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղված են ցորենի, գարու, բազմամյա խոտաբույսերի, պտղի և խաղողի, ինչպես նաև բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրությամբ, որը խիստ զգայուն է շրջակա միջավայրի նկատմամբ և մեծապես կախված է բնության քմահաճույքից: Ընդահուր առմամբ համայնքում արտադրվում է խնձոր, տանձ, ծիրան, կեռաս, բալ, ընկյուզ, միս, կաթ, բուրդ, ձու, մեղր և բանջարաբոստանային մշակաբույսեր: Հողերը համարվում են ոռոգովի հողատարածություններ: Ոռոգման ջուր մատակարարվում է Աշտարակ և Քասախ ԶՕԸ-ի կողմից: Համայնքում արոտավայրերը մեծամասամբ գտնվում են դարավանդների վրա: Դաշտամիջյան ճանապարհները համայնքում գտնվում են ոչ բարվոք վիճակում: Գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար համայնքում առկա է 12 տրակտոր, 10 քեռնատար-ավտոմեքենաներ, 7 կցասայլեր, 2 մամլիչ-բարդոճիչներ, 5 գուփան, 2 շարքացան:

ԱՂՅՈՒՍԱԿ 6.

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳԼԻՍԱՔԱՆԱԿԸ

Հ/Հ	Ցուցանիշները	01.01.2016 թ. դրությամբ
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝ Կովեր	875 574
2.	Խոզերի գլխաքանակը	64
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	520
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	-
5.	Ձիերի գլխաքանակը	-
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	2100
7.	Մեղվաընտանիքների քանակը	25

1.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբահանության գործընթացն իրականացվում է շաբաթական մեկ անգամ «Վիկտորիա» ՍՊԸ-ի միջոցով: Համայնքում ոռոգման ջուրը մատակարարվում է Աշտարակի ԶՕԸ-ն կողմից՝ Ոռոգման համակարգում կորուստները կազմում են 70 %: Կապիտալ վերանորոգման

կարիք ունի խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ներհամայնքային համակարգը, սակայն 2013թվականին Նոր Երզնկա համայնքի նոր կառուցվող թաղամասի բնակիչներին շուրջօրյա խմելու ջրով ապահովելու նպատակով կառուցվեց 1910զձմ ջրագիծ շուրջ 19000.0 հազդրամ նախահաշվային արժեքով: Համայնքում չկան անտառապատ տարածքներ, ջրավազաններ և հատուկ պահպանվող տարածքներ: Համայնքն ունի երեխաների համար նախատեսված խաղահրապարակ, սակայն անհրաժեշտ է այնտեղ տեղադրել ժամանակակից խաղեր:

Սակայն այս ամենով հանդերձ համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում դեռևս պետք է կատարել հետևյալ միջոցառումները՝

Ավելացնել համայնքի կանաչապատ տարածքները, բարեկարգել գրոսայգին, կառուցել սպանդանոց՝ կենդանիների մորթը թույլատրված նորմերում կատարելու համար, համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ, ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները, ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր Երզնկա համայնքն ունի 17 կմ երկարությամբ ներբնակավայրի ճանապարհներ, և փողոցներ, 20 կմ երկարությամբ այգիներ տանող հիմնական դաշտամիջյան ճանապարհներ: 2013-2015 թվականներին կատարվել են 1-ին և 3-րդ փողոցների կապիտալ վերանորոգում շուրջ 51500.0 հազար դրամի չափով: Ներհամայնքային ճանապարհները ասֆալտապատ լինելով մշտապես պահանջում են վերանորոգում, իսկ նոր կառուցվող թաղամասերի ճանապարհները գրունտային են: Համայնքը բաղկացած է 2 բնակավայրից, որոնք իրար կապողը համայնքի 3-րդ փողոցն է, իսկ 8-րդ փողոցը դարձել է անանցանելի, այս փողոցները առաջնային են համարվում մնացած փողոցների համեմատ, որոնք կապիտալ վերանորոգման կարիք ունեն, իսկ նախահաշվային արժեքը կազմում է 60000.0 հազ. դրամ: Համայնքում աշխատում էր Նոր Երզնկա-Երևան երթուղայինը, սակայն այն դադարեցրեց աշխատել: Ուսանողների սպասարկման համար անհրաժեշտ է գոնե մեկ երթուղային, որը կուղևորվի դեպի մայրաքաղաք: Համայնքի բնակավայրերում տեղադրված կանգառներ չկան, անհրաժեշտ է տեղադրել բազմաֆունկցիոնալ կանգառներ:

Համայնքում տեղադրված են տեղեկատվական վահանակներ՝ համայնքում մատուցվող ծառայությունների և այլնի մասին, ցուցանակներ, որոնք կավելացնեն բնակչության տեղեկատվածությունը, համայնքում տեղադրված չեն ճանապարհային նշաններ, որը նույնպես շատ կարևոր է: Սակայն համայնքի փողոցները ամբողջովին համարակալված են անհրաժեշտ ցուցանակներով:

1.12 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոր Երզնկա համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի խանութներ:

Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները ներկայացված են աղյուսակ 7-ում:

**Նոր երզնկա համայնքի արտադրական, առեվտրային եվ
ծառայություններ մատուցող կազմակերպություններ
առ 01.12.2016թ դրությամբ**

Արտադրական կազմակերպություններ	Առևտրային կազմակերպություններ	Ծառայություններ մատուցող կազմակերպություններ
✓ Ա/Ձ Վարդան Անտոնյան Ա/Ձ Մարիետա Օհանյան Ա/Ձ Նվարդ Մկրտչյան Ա/Ձ Կարո Սարուխանյան	✓ 4 (Չորս) սննդի և տնտեսական ապրանքների խանութներ	

Առևտրի և սպասարկման ոլորտներում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 4 մարդ:

1.134ԲԹՈՒԹՅՈՒՆ

Նոր երզնկա համայնքում գործում են հիմանորոգված հանրակրթական միջնակարգ 1 դպրոց: Դպրոցը ջեռուցվում է գազի անհատական ջեռուցման համակարգով: Համայնքն ունի մեկ նախադպրոցական ուսումնական հաստատություն (ՆՈՒՀ), որի հզորությունը նախատեսված է 120 երեխաների համար, սակայն ներկա դրությամբ մտուր մանկապարտեզ են հաճախում շուրջ 60 երեխա՝ 2 խումբ, որոնց սպասարկում են 13 աշխատողներ: Մանկապարտեզի շենքը կապիտալ վերանորոգված է,ինչպես նաև նորացվել է գույքը,սակայն ունի գույքի ձեռքբերման կարիք: Մանկապարտեզը չունի ջեռուցման համակարգ,որի պատճառով գործում է 7 ամիս,ջեռուցման համակարգի կառուցումից հետո մանկապարտեզը կաշխատի ամբողջ հզորությամբ և ամբողջ տարին, ինչպես նաև կստեղծվեն նոր աշխատատեղեր համայնքի երիտասարդ կադրերի համար: Համայնքի ՆՈՒՀ-ը աշխատում է 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, տրվում է երեք անգամյա սնունդ: Ավագանու որոշմամբ ՆՈՒՀ-ում ծնողական վճարի չափը սահմանված է 6000 (վեց հազար) դրամ:

Աղյուսակ -ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Նոր երզնկա համայնքի հանրակրթական դպրոցի, նախադպրոցական հաստատության և մշակույթի տան վերաբերյալ ցուցանիշներ

Հ/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
-----	------------------------	------------------	------------------

1.	«Նոր Երզնկայի միջն. դպրոց» ՊՈԱԿ	36	256
2.	« Նոր Երզնկայի մշակույթի տուն » ՀՈԱԿ	6	36
3.	«Նոր Երզնկայի մսուր-մանկապարտեզ » ՀՈԱԿ	13	60

Նոր Երզնկա համայնքում գործում է առողջության առաջնային պահպանության մեկ կազմակերպություն՝ Նոր Երզնկայի ԱԱՊԿ:

ԱԱՊԿ-ի շենքը մասնակի վերանորոգված է ,ունի վերանորոգման կարիք, ապահովված չէ ջեռուցման համակարգով:

1.14 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նոր Երզնկա համայնքում հիմնովին վերանորոգված շենքում գործում է «Նոր Երզնկայի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ը, որտեղ գործում «Երիզա» ժողովրդական պարի խումբը: Այստեղ սովորում են շուրջ 36 երեխա, որոնց սպասարկում է 1 պարուսույց: Այստեղ տարվա ընթացքում կազմակերպվում են միջոցառումներ նվիրված միջազգային, հանրապետական և համայնքային տոներին: Մշակույթի տանը գտնվում է նաև համայնքի գրադարանը, որտեղ կա շուրջ 7213 կտոր գրականություն և տարեկան սպասարկում է 150 ընթերցող: Համայնքն ունի www.norerznka.am ինտերնետային վեբ կայքը, որտեղ տեղ է գտնում համայնքային նորությունները, համայնքում իրականացվող բոլոր միջոցառումները, համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումները, կարգադրությունները, համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերը և դրանց տնօրինումն ըստ կատարման ժամկետների, ինչպես նաև հայտարարություններ:

1.15 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է մեկ բուժամբույատորիա, որտեղ աշխատում են 1 բժիշկ և 2 բուժքույրեր, շենքը մասամբ վերանորոգվել է Սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով, որտեղ համայնքը նույնպես կատարել է 2250.0 հազար դրամի ներդրում,վերանորոգելով շենքի տանիքը: Քայլեր են ձեռնարկվում համայնքում տարաբնույթ սպորտային խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Համայնքի տարածքում սպորտդահլիճներ, ֆուտբոլի դաշտ առկա են միայն դպրոցում , սակայն սպորտդահլիճում պակասում է համապատասխան գույքը:

1.16 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքն ունի 0.26 հա տարածքով զբոսայգի, որի տարածքում կառուցված է Ղարաբաղյան պատերազմի զոհվածների հուշարձան-կոթողը: Տարածքը ամբողջովին ծառապատված է,անհրաժեշտ է տեղակայել նաև երեխաների համար նախատեսված կառույցներ, ինչպես նաև համայնքի անունով նստարաններ և աղբամաններ: Համայնքի տարեցների համար կառուցվել է 1 զրուցարան, որտեղ իրենց ժամանակն են անցկացնում համայնքի տարեց բնակիչները: Համայնքն ունի նաև հանդիսությունների սրահ տարբեր բնույթի միջոցառումների անցկացման համար:

1.17 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Քանի որ համայնքի տարածքում չկան գործող մեծ գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչությունը աշխատանք է փնտրում հիմնականում Երևան քաղաքում, որոշներն էլ համայնքի տարածքում գտնվող ՀՈԱԿ-ներում, դպրոցում, և երիտասարդների համար արդեն ավանդույթ դարձած մոտակա զորամասերում պայմանագրային հիմունքներով աշխատատեղերում աշխատելու հնարավորությունը:

Համայնքում չկան աշխատանքի և սոցիալական ծառայության գործակալություններ: Համայնքապետարանն իր հնարավորությունների սահմաններում դրամական օգնություն է ցուցբերում սոցիալապես անապահով ընտանիքներին, համայնքի ծնողազուրկ, հաշմանդամ երեխաներին:

1.18 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբ կայքը՝ www.norerzka.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, կայքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը դեռևս հեռու է բավարար լինելուց և անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում և բնակավայրերի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքի ավագանին.

16.06.2016թ. N 27-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»

16.06.2016թ. N 29-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»

16.06.2016թ. N 28-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»:

Ավագանին 30.11.2016թ. N 51 որոշմամբ հաստատել է

1. Նոր Երզնկա համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կազմը՝
 - ❖ խորհրդակցական մարմնի նախագահ՝ Ալինա Հարությունյան - համայնքի ղեկավար
 - ❖ խորհրդակցական մարմնի քարտուղար՝ Գրիգոր Մարդոյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
 - ❖ խորհրդակցական մարմնի անդամներ՝
 - Հայկուշ Նազարյան - աշխատակազմի գլխավոր մասնագետ
 - Լուիտուա Տոնոյան- աշխատակազմի առաջատար մասնագետ
 - Երազիկ Մեսրոպյան- համայնքի ավագանու անդամ
 - Սևակ Սարգսյան - համայնքի ավագանու անդամ
 - Վաղինակ Պապեյան- համայնքի բնակիչ

2. **Հաստատել** Նոր Երզնկա համայնքի ղեկավարին կից քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի կազմը՝

- ❖ խորհրդակցական մարմնի նախագահ՝ Ալինա Հարությունյան - համայնքի ղեկավար
- ❖ խորհրդակցական մարմնի քարտուղար՝ Գրիգոր Մարդոյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
- ❖ խորհրդակցական մարմնի անդամներ՝
 - **Լևոն Խուրշուդյան** – աշխատակազմի գլխավոր մասնագետ
 - **Ջանիբեկ Սահակյան** - համայնքի ավագանու անդամ
 - **Ծովակ Գասպարյան** - համայնքի ավագանու անդամ
 - **Վոսմ Մարդոյան** – համայնքի ավագանու անդամ
 - **Հրաչիկ Գևորգյան** – համայնքի բնակիչ

3. **Հաստատել** Նոր Երզնկա համայնքի ղեկավարին կից կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական, երեխաների պաշտպանության հարցերի խորհրդակցական մարմնի կազմը՝

- ❖ խորհրդակցական մարմնի նախագահ՝ Ալինա Հարությունյան - համայնքի ղեկավար
- ❖ խորհրդակցական մարմնի քարտուղար՝ Գրիգոր Մարդոյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
- ❖ խորհրդակցական մարմնի անդամներ՝
 - Արտուր Բադալյան - համայնքի ավագանու անդամ
 - Աղավնի Նազարյան - մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն
 - Կարինե Խուրշուդյան - մշակույթի տուն ՀՈԱԿ-ի տնօրեն Սուսաննա
 - Կարո Սարուխանյան - համայնքի ավագանու անդամ

1.19 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Նոր Երզնկա համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համարնախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների կատարման կոմունիկացիոն սխեմաներ: Բնակավայրերում եղած թաքստոցները հաշվառված են համայնքապետարանի կողմից: Անհրաժեշտություն կա թաքստոցները ավելացնել բնակչության թվին համապատասխան:

Համայնքում աղետների ռիսկերի կառավարման համար, Նոր Երզնկա համայնքի ղեկավարի 2013 թվականի օգոստոսի 22-ի N 40 որոշմամբ ստեղծվել է ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով, ինչպես նաև հաստատվել է հանձնաժողովի կանոնադրությունը և գործունեության կարգը:

2.1.1 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը,
3. Համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպում, համայնքի սեփականություն համարվող վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը,
4. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստում, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծումը,

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

2.1.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊՐԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի ուժեղ կողմերն են՝
- Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ,ակտիվ երիտասարդություն
- Համայնքի մոտ գտնվելը Երևան և Աշտարակ քաղաքներին

Հյուսիս-Հարավ ճանապարհին սահմանակից լինելը,
Համայնքն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարումով
Գյուղ նշանակության հողերը ոռոգելի է 100 %-ով
Համայնքի գազաֆիկացված լինելը

Նոր երզնկա համայնքում ամբողջությամբ կայացած կարելի է համարել տեղական
ինքնակառավարումը, և առաջիններից է եղել, որտեղ համայնքի բոլոր գործառույթները
իրականացնում են էլեկտրոնային համակարգով: 2011թվականից համայնքի զարգացման
պլանավորման և իրականացման գործում մեծ դեր է խաղացել նաև համայնքի
կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ներդրումը և օգտագործումը,
իսկ 2014թվականի փետրվար ամսից նաև client treasury բյուջեի փոխանցումների համար
նախատեսված ֆինանսական ծրագիրը: Համայնքում կա շուրջօրյա
ջրամատակարարում: Համայնքը գրեթե ամբողջությամբ գազաֆիկացված է, համայնքի կեն-
տրոնական փողոցները լուսավորված են, շաբաթական 1 անգամ իրականացվում է աղբա-
հանություն: Համայնքում գործում է վերանորոգված մշակույթի տուն, վերանորոգված
գործող մանկապարտեզ: Համայնքում շատ են բարձրագույն կրթություն ունեցողները և
որպես զարգացած և բարեկեցիկ համայնք միշտ գտնվում է հանրապետության գործադիր
մարմնի ուշադրության կենտրոնում: Համայնքի գրեթե բոլոր ընտանիքները ունեն
համակարգիչներ և կարողանում են օգտվել նաև համացանցի ծառայություններից:
Հեռախոսային կապի և համացանցի կայուն աշխատանք ապահովելու նպատակով,
հանրապետության 2 բջջային օպերատորների՝ Վիվասել և Յուբոմի կողմից տեղադրվել
են բջջային ալեհավաքներ:

2.1.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅՆ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝
Ճանապարհների վատ վիճակը,
Գործազրկության առկայությունը և արտագնա աշխատանքի
մեկնողների մեծ քանակը,
Աշխատատեղերի բացակայությունը
Տրանսպորտային կապի բացակայությունը
մայրաքաղաքի և Աշտարակ քաղաքի հետ
Խմելու ջրի ներհամայնքային համակարգի մաշվածությունը

2.1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

Մեծ քանակի և որակի աշխատուժի առկայությունը,
Արտադրական տարածքների առկայությունը:
Նորաստեղծ այգիների առկայությունը

2.1.4 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝
Գործազրկության մակարդակի աճը,
Խմելու ջրի ներհամայնքային համակարգի մաշվածություն
Լուրջ սպառնացող վտանգ է հանդիսանում նաև բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն, սողանքների առաջացում)

ԲԱԺԻՆ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՀՋԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ

Նոր երզնկա համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ առաջատար տեղ զբաղեցնող, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները՝ նախադպրոցական կրթություն և դաստիարակություն, մշակութային, սպորտային ծառայություններ և այլն:

Նոր երզնկայի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Գյուղի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և, հաշվի առնելով գյուղի աշխարհագրական դիրքը, համայնքը դարձնել պտղաբուծության, վերամշակման գոտի, մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության,

լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

Մտուր-մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցում
Ներհամայնքային ճանապարհների նորոգում,
Մտուր-մանկապարտեզի բակի կահավորում խաղերով
Նոր թաղամասի գազաֆիկացումը
Համայնքային սեփականության շենքերի նորոգում
Համայնքի գլխավոր հատակագծի ձեռք բերում
Նոր թաղամասի փողոցային լուսավորության ցանցի կառուցու
Այս նպատակների իրականացման համար անհրաժեշտ է

Ապահովել համայնքի բնակավայրերի համամասնական զարգացումը

Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ:

Նպաստել ձեռներեցության խթանմանը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ

Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները

Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը

Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ

Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը

Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

Համայնքի զարգացման 2017-2021թթ. ծրագրի հիմնական **նպատակներն են՝**

Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ

Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից

Համայնքը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ բնակիչների համար Ունենալ այգիներ տանող հարթ և բարեկարգ ճանապարհներ՝ նպաստելով այգեգործության և էկոտուրիզմի զարգացմանը

Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը

Ունենալ բարեկարգ զբոսայգիներ, խաղահրապարակներ

Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ

Նպաստել կենդանիների մթերատվության բարձրացմանը

Ապահովել տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ

ԲԱԺԻՆ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Նոր Երզնկա համայնքում գալիք 2017-2021թթ. Ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Կոտայքի մարզպետարանի և Աշտարակի քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

❖ Աշտարակ քաղաքի հետ, որը լինելով համայնքին սահմանակից, մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցություն կկազմակերպի և կապահովի՝ համագործակցություն ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպությունների:

